Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 488 - Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել Գավառ համայնքին՝ Գեղարքունիք բնակավայրի մանկապարտեզի տարածքում տեղադրելով կեղտաջրերի մաքրման կայան, համայնքապետարանի կողմից նախապես հատկացված տարածքում: Կայանի տեղադրումը կնպաստի Սևանա լիճ հոսող Գավառագետի Ձուր վտակի ջրերի մաքրմանը: Իսկ մաքրված կեղտաջուրը տարվա ամիսներին կօգտագործվի մանկապարտեզի տարածքի սիզամարգերի և ոչ պտղատու ծառերի ոռոգման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Չեխիայի կառավարություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի դեսպանության (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց 48/1) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան փողոց 9, ՀՎՀՀ՝ 01549618) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գեղարքունիք բնակավայր, բնագավառը՝ համայնքային զարգացում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 414,000 չեխական կրոնին համարժեք՝ 7,300,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի օգոստոսի 3-ից մինչև հոկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կեղտաջրերի մաքրման կայանի ներմուծում և տեղադրում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի օգոստոսի 3-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 7,300,000 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Կեղտաջրերի մաքրման BIOTAL-6-MPD-N-RBU կայանի ներմուծման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 7,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր  չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Գավառի համայնքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի դեսպանատան և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի միջև կնքված պայմանագրի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ